Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Բարձրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2-րդ դասարանի դասվա (19 դասաժամ), 3-րդ դասարանի դասվար (19 դասաժամ),Աշխարհագրության (5 դասաժամ), ֆիզկուլտուրայի (18 դասաժամ), Ինֆորմատիկա (6 դասաժամ), Ֆիզիկայի (6 դասաժամ), Մաթեմատիկայի (18 դասաժամ), Կերպարվեստ (5 դասաժամ)5, Երաժշտություն (5 դասաժամ), Տեխնոլոգիա (5 դասաժամ), ՆԶՊ ուսուցչի թափուր տեղի համար մրցույթ:
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 2-ից մինչև սեպտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի սեպտեմբերի 19-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի Բարձրավանի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Գորիս համայնք, գ. Բարձրավան, Բարձրավանի միջնակարգ դպրոց:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 322685, հեռախոսահամարով: